ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N –27

20.12.2018 թվական

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14 –րդ հոդվածի 6 -րդ կետի դրույթներով ավագանին որոշում է՝

Հաստատել Վերին Դվին համայնքի ավագանու թիվ 7 նիստի օրակարգի հետևյալ հարցերը.

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

2.ՎԵՐԻՆ ԴՎԻՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ և ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ , ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏԱՄԱՆ ՄԱՍԻՆ

3. 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ և ՀԱՍՏԱՏԵՈՒ ՄԱՍԻՆ

4. ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ ---7--, դեմ՝ ----0, ձեռնպահ՝ 0-----

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Ա. Պետրովա-

2. Զ. Չիչյան

3. Ի. Դինխուն -

4. Մ. Լազարևա-

5. Ս. Միխայլով –

6. Կ. Ղիճյան –

7. Ա. Բարսյան –

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՊԵՏՐՈՎԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 28–Ն

20.12.2016 թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջներով ավագանին որոշեց .

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 240,0 հազար դրամ :

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Ա. Պետրովա-

2. Ջ. Չիլյան

3.Ի. Դինխոև -

4. Մ. Լազարևա-

5. Ս. Միխայլով –

6. Կ. Նիկոլյան –

7. Ա. Բադալյան –

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ

---

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 29 –Ն

20.12.2018թ.

### ՎԵՐԻՆ ԴՎԻՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ և ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏԱՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի դրույթներով ավագանին որոշեց հաստատել գյուղապետի առաջարկած աշխատակազմի հետևյալ թվաքանակը, հաստիկացուցակը և նրանց պաշտոնային դրույքաչափերը:

| | |
|---|---|
| 1. Աշխատակազմի քարտուղար | -- 1 - 160,0 հազ. դրամ |
| 2. Աշխատակազմի գլխավոր մասնագետ | -- 1 -- 155,0 հազ. դրամ |
| 3. Աշխատակազմի առաջատար մասնագետ | -- 1 -- 150,0 հազ. դրամ |
| 4.աշխատ. առաջին կարգի մասնագետ | -- 1 – 140,0 հազ. դրամ |
| 5. օպերատոր | -- 1 – 90,0 հազ, դրամ |
| 6.մշակույթի տան տնօրեն | -- 1 -- 90,0 հազ. դրամ |
| 7.համույթի ղեկավար | -- 1 -- 80,0 հազ. դրամ |
| 8. գրադարանավար | -- 1 – 80,0 հազ, դրամ |
| 9.սպորտ կազմակերպիչ | -- 1 – 75,5հազ. դրամ |
| 10. պահակ | -- 1 – 80,0 հազ. դրամ |
| 11. այգեպան | -- 1 -- 80,0 հազ. դրամ |
| 12. հավաքարար | -- 1 – 80,0 հազ.դրամ |

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ ---7, դեմ՝ ---0, ձեռնպահ՝ ---0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Ա. Պետրովա-

2. Ջ. Չիչյան

3. Ի. Դինխոն -

4. Մ. Լազարևա-

5. Ս. Միխայլով –

6. Կ. Նիկոլյան –

7. Ա. Բաղալյան –

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 30-Ն

20.12.2018 թ.

## 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ և ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ,10-րդ,11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով և << Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի հոդվածներով ավագանին որոշեց .

Հաստատել Վերին Դվին համայնքում 2019 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը համաձայն հավելվածի

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝-----7, դեմ՝ ---0-, ձեռնպահ՝--0

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Ա. Պետրովա-

2. Ջ. Չիլյան

3.Ի. Դինխուն -

4. Մ. Լազարևա-

5. Ս. Միքայելով –

6. Կ. Նիկոլյան –

7. Ա. Բաղայան –

Համայնքի ղեկավար՝ Լ. Պետրովա

Հավելված 1
Վերին Դվին համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 20 –ի թիվ 30-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15 000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ .

բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ,

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների. շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետեւանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ.

3 . Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

Սահմանված դրույքաչափերը հաշվարկված են 0,5 գործակցի կիրառմամբ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

. Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ.

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3300 դրամ.

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ.

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6 000 դրամ.

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 դրամ.

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 դրամ:

.Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ.

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3300 դրամ.

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ.

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ.

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7500 դրամ.

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 դրամ:

5. ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 200 000 դրամ.

6. Համայնքի տարածքում՝ առևտրի օբյեկտներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 25 000 դրամ.

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1700 դրամ.

գ. սոցիալական գովազդի համար 0 դրամ

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 700 դրամ.

ե. Դատարկ գովազդային վահանակների համար այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25% չափով՝ 150 դրամ

զ.եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով՝ 70 դրամ

.Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը հաշվարկված է 0,5 գործակցի կարառմամբ:

8. Համայնքի տարածքում մարդատար- տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար յուրաքանչյուր մեքենայի համար ՝սահմանվում է 10 000 դրամ:

. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

9 . Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

10.Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերձնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 400 դրամ :

11.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ կազմակերպելու հետ կապված մասնակիցներից մուտքավճար սահմանել 1000 դրամ

12. Սահմանել աղբահանության վճար՝

ա/ ֆիզիկական անձանցից ամսեկան 60 դրամ:

բ/ իրավաբանական անձ՝

- Խանութ -1 -7900 դրամ
- Խանութ „Էդիտա„ - 8400 դրամ
- Խանութ – 3 – 1600 դրամ

13. Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ սահամնել ՝

ա/ Կենդանիների հիվանդությունների բուժման,կանխարգելման հարցերովխորհրդատվություն 500 դրամ

բ/վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների կանխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում բացառությամբ <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրումընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների մանր եղջերավոր անասունների համար 100 դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 200 դրամ.

գ. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար 200 դրամ

դ. Ախտահանության 1 քառակուսի մետրի համար 200 դրամ

ե. Միջատազերծում /դեզինֆեկցիա/ 1 քառակուսի մետրի համար 100 դրամ

զ.կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/ 1 քառակուսի մետրի համար200 դրամ

է. Արհեստական սերմնավորման համար՝5000 դրամ

ը. Կենդանու ներձում մանր եղջերավոր անասունների համար՝ 1000 դրամ, խոշորեղջերավոր անասունների համար 3000 դրամ

թ.Կենդանու բուժում յուրաքանչյուր այցելությունը մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 2000 դրամ

ժ. Կենդանիների նախասպանդային զննում մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ , խոշոր եղջերավոր անասունների համար 2000 դրամ

Հարգանքներով,
Վերին Ճգնի համայնքի ղեկավար՝ Լ. Պետրովա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N 31-Ն

20.12.2018 թ.

## ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով ավագանին որոշեց՝

Հաստատել Վերին Դվին համայնքի 2019 թվականի բյուջեն:

ՎԵՐԻՆ ԴՎԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Համայնքի բյուջե մուտքագրվող գույքահարկ -- 1850,0

Գույքահարկ անհատ ձեռնակատերերից և քաղաքացիների փոխադրամիջոցների համար -1800.0

Գույքահարկ շենքի և շինությունների , այդ թվում – 50,0 հազ. դրամ

Հողի հարկ՝ համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի համար – 6512,5 հ.դր.

Գյուղատնտեսական նշանակության համար – 6300.0 հ.դր.

Հողի հարկ իրավաբանական անձանցից – 212,5 հ. դր.

Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալությունից–2120,8

Համայնքի սեփականություն հանդիսացող ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճար –1600,0

Այլ գույքի վարձակալությունից մուտքեր – 40,8

Համայնքի սեփականություն հանդիսացող ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության վճար – 480,0

Պաշտոնական ընթացիկ տրանսֆերներ / դոտացիա / - 36851,5

Տեղական տուրքեր – 132,0 հ.դր.

ա/ Ծխախոտի վաճառքի թույլտվություն – 66,0 հ.դր.

բ / Խմիչքի իրացման թույլտվություն – 66,0 հ. դր.

Տեղական վճարներ - 1929.6

Աղբահանության վճար – 1773,6

Այլ վճար /մուտքի վճար/-156,0

Վ.Դվինի համայնքի 2019 թ.բյուջեի

հիմնավորումը

կառ.մարմնի պահպանում

1.4111 – 15000 աշխատավարձ

2.4112 – 1200.0 պարգևատրում

4.4212 – 500.0 էներգետիկ ծառայություն

5.4213 – 150.0 խմելու ջրի վարձ,դեռատիզացիա

6.4214 – 250.0կապի ծառայ.,ինտերնետ

7. 4215 – 30.0 ծառայողական ավտոմեքենայի ապահովագրության գումար

8.4231 – 100.0 գործուղման գումար

8.4234 – 394.8 թերթի բաժանորդագր.

10.4252 – 300.0մեքենաների և սարքավորումների ընթ.նորոգ.

11.4261 – 200.0 գրասենյակային նյութեր

12.4264–800.0 տրանսպորտային նյութեր՝բենզին,ավտոպահեստամասեր

13.4267 – 150.0 տնտեսական նյութեր

13.4269 -300.0 հատուկ նպատակային նյութեր

14.4823 –15.0 ծառայողական ավտոմ.տեխ զննում

15.4232 –200.0 համակարգչային ծառայություն

16,4233 - 100,0 աշխատակազմի մասնագիտ.զարգացման գումար

01.06.01.60

Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման և տեղեկատվության տրամադրում

1 4819.—25.0 ֆին.աջակցություն համայնքների միությանը

2.4241 – 300.0 մասնագիտական ծառայություն

2,4823 — 300,0 անշարժ գույքի պետական գրանցմ.վկ.ձեռք բերում

## 10.07.01.55

հասարակական կազմակերպություններին աջակցություն

1.4819 – 300.0 ֆինանսական աջակցություն՝<ԱՐԱՐՏՏ-2001>բարեգործական հիմնադրամին

## 05.01.01.51

Աղբահանություն և սանիտարական մաքրում

1.4213— 1755.6 սան.մաքրման աշխատանքներ

2,4823 – 20,0բնապահպանությն վճար

## 06.04.01.52

Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում

1.4251—1000.0 արտաքին լուսավորության ցանցի ընթացիկ նորոգում

## 08.02.04.51

Մշակութային միջոցառումների իրականացում

1.4111---3906.0 մշ.տան աշխատողների աշխատավարձ

2.4112—200.0 պարգևատրում

3.4212 – 600.0 էներգետիկ ծառայություն/գազ/

3 4241.- 100.0 գազի տեխ սպասարկում

3.4269—800.0 նվերներ կապված պետական տոների հետ

4.4239 – 1500.0 տոնակատարությունների անցկացման գումար

5. 4252 – 200.0 մեքենաների և սարքավորումների ընթ.նորոգ.

## 09.01.02.51

հանրակրթական ուսուցում

1.4269 – 500.0 նվերներ՝ դպրոց հաճախող երեխաներին

2. 4637—1000.0 ֆին աջակցություն միջն.դպրոցի

## 08.02.05.52

Թատերական ներկայացումներ

1,4239 – 200,0 Թատրոնի մատուցած ծառայություն

## 07.02.01.51

Մասնագիտացված բժշկական ծառայություններ

1,4637—500.0 դրամաշնորհ՝ բուժ.ակ.

2.4728 – 1000.0 ֆին. աջակցություն բուժման նպատակով

# 10.07.01.54

Սոցիալապես անապահով անձանց աջակցություն

1.4729 – 4000.0 Այլ նպաստներ բյուջեից

2. 4726 – 1000.0 թաղման ծախսի գումար

3.4239 –400.0 հուղարկավորության հետ կապված սգո պարագաների ձեռք բերում

05.04.01.51

կենսաբազանություն և բնության պաշտպանություն

1.4239 –100.0 հակակարկտային կազմակերպության աշխատանքների կազմակերպման համար

# 04.05.01.59

Փողոցների շահագործում և պահպանում

1, 4241 – 200,0 ճանապարհային նշանների տեղադրում

# 08.02.01.51

Սպորտային միջոցառումների իրականացում

1.4269 սպորտային պարագաններ –200.0

# 11.01.02.51

4891-- վ/բ պահուստային ֆոնդ –9600.0

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ ---7---, դեմ՝ ----0, ձեռնպահ՝ ---0---

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1.Ա. Պետրովա-

2. Զ. Չիլյան -

3.Ի. Դինխոն -

4. Մ. Լազարևա-

5. Ս. Միխայլով –

6. Վ. Նիկոլաև –

7. Ա. Բաղալյան –

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. Պետրովա